

«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Մանկական ագրեսիա ն/դ տարիքում

Կատարող՝ Լիանա Հատրաթյան

Ղեկավար՝ Կ. Գևորգյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՊԼՈՒԽ 1. ՊԼՈՒԽ 1. ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	
1.1. Ագրեսիվությունն ուսումնասիրող տեսություններ.....	4
1.2. Մանկական ագրեսիայի առաջացման պատճառները և տեսակները.....	6
ՊԼՈՒԽ 2. ՊԼՈՒԽ 2. ՄԻՋՈՑՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ	
2.1. Դրական ծնողավարման օրինակներ.....	10
2.2. Կանոններ կարգապահության արդյունավետ ներմուծման համար.....	12
2.3. Երեխայի ագրեսիվ վարքին ուղղված խաղեր և վարժություններ.....	14
ՊԼՈՒԽ 3. ԵՐԵՒԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ	
3.1. Երեխայի ագրեսիվ վարքի վերլուծությանն ու ախտորոշմանն ուղղված մեթոդներ և մեթոդիկաներ.....	16
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	..20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ագրեսիան որևէ մեկին վնաս պատճառելու միտումն է: Երեխաների մոտ ագրեսիվության դրսևորման պատճառների բացահայտումը և իմացությունը մեծամասամբ կարող են նպաստել հասկանալու վարքի առանձնահատկությունները և ձեռնարկելու համապատասխան կանխարգելիչ ու շտկողական միջոցառումներ:

Թեմայի արդիականությունը: Նախադպրոցական տարիքում ագրեսիայի այս կամ այլ ձևերը հատուկ են երեխաների մեծամասնությանը: Այդ ժամանակաշրջանում դեռ ուշ չէ խուսափել, որպեսզի ագրեսիվությունը չտրանսֆորմացվի (չվերածվի) բնավորության կայուն գծերի: Նպաստավոր պահը բաց թողնելու հետևանքով երեխայի հետագա զարգացման մեջ կարող են պրոբլեմներ առաջանալ, որոնք կխանգարեն նրան լիարժեք անհատականություն դառնալու, արտահայտելու անհատական պոտենցիալը: Բազմազան և բազմաբնույթ են մանկական ագրեսիայի պատճառները, և կարևոր է հասկանալ մեր այն վարքագծային դրսևորումները, որոնք կարող են երեխայի մոտ ագրեսիվ վարքագծի դրսևորման պատճառ դառնալ:

Աշխատանքի նպատակը: Տեսա-գործնական գրականության վերլուծության հիման վրա համակարգել տեղեկատվությունը, վերլուծել ագրեսիայի առաջացման հիմնական պատճառները, կանխման միջոցները և հաղթահարման եղանակները:

Աշխատանքում ներկայացված է.

- Ագրեսիայի հիմնախնդիրը հոգեբանության մեջ, տեսությունները,
- Ագրեսիայի հիմնական պատճառները մանկական տարիքում, տեսակները
- Դաստիարակության դերը երեխայի հեգաբանական առողջության պահպանման գործում, դրական ծնողավարում
- Երեխայի ագրեսիվ վարքին ուղղված խաղեր և վարժություններ
- Երեխաների ագրեսիվ վարքի ախտորոշում:

ԳԼՈՒԽ 1. ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

1.1. Ագրեսիվությունն ուսումնասիրող տեսություններ

«Ագրեսիա» հասկացությունը գրականության մեջ օգտագործելով որոշ հետազոտողներ հասկանում են ուժեղ ակտիվություն, ինքնահաստատման ձգտում: Ագրեսիա ասելով հասկանում են նաև թշնամության փաստեր, ջարդեր, այսինքն գործողություններ, որոնք առաջացնում են կենդանի կամ անկենդան օբյեկտների քայքայում: Միևնույն ժամանակ հեղինակները առանձնացնում են «ագրեսիա» հասկացությունը որպես վարքի ձև և «ագրեսիվությունը» որպես անձի հոգեկանի վիճակ: Ն.Դ.Լևիտովը ագրեսիվության վիճակը նկարագրում է որպես ինքնակառավարումը կորցնելու հետևանքով առաջացած գայրույթի զգացում [6]:

Բազմաթիվ հոգեբաններ են անդրադարձել ագրեսիայի ուսումնասիրման խնդրին, օրինակ Ֆրոյդը, Ա.Բասը, Լ.Բերկովիչը: Ա. Բասը առաջ քաշեց ինստրումենտալ և թշնամական ագրեսիա հասկացությունները: Է.Ֆրոմը առանձնացրեց ագրեսիայի բարորակ և չարորակ տեսակները: Ագրեսիան կարող է լինել ինչպես կանխամտածված, այնպես էլ ոչ դիտավորյալ: Ա.Բասը և Ա.Դարկը առանձնացրել են ագրեսիայի հինգ տեսակ.

- ֆիզիկական ագրեսիա
- գրգռվածություն (բռնկում, կոպտություն)
- խոսքային ագրեսիա
- անուղղակի ագրեսիա (ուղղորդված կամ չուղղորդված)
- նեգատիվիզմ

Հոգեվերլուծական մոտեցումը ագրեսիան դիտարկում է պայքարելու բնագոյ, որը վերականգնվում է: Ագրեսիայի ուսումնասիրման առաջին փորձերը պատկանում են Ֆրոյդին: Ժամանակի ընթացքում անհատի մոտ կուտակված ագրեսիվ էներգիան դուրս է գալիս պայթյունի միջոցով, եթե նախորդ պայթյունից հետո ավելի երկար ժամանակ է անցել, ապա սպասվելիքը հնարավոր է անցնի սպոնտան ձևով և գրգռիչ չլինի [6]:

Ըստ Չ.Ֆրոյդի և Կ.Լորենցի տեսությունների համեմատական վերլուծության, Չ.Ֆրոյդը առաջ էր տանում ավերող բնագոյի հիպոթեզը, իսկ Կ.Լորենցը այդ հիպոթեզը կենսաբանական մակարդակում համարում էր չափազանց անընդունելի: Ըստ Կ.Լորենցի, ագրեսիվ բնագոյը ծառայում է կյանքի գործին, իսկ Չ.Ֆրոյդի մոտ նույն բնագոյը ծառայում է մահվանը: Չ.Ֆրոյդը և Կ.Լորենցը գտնում էին, որ վատ է, եթե ագրեսիան չի դառնում գործողություն և ագրեսիայի դուրս չմղելը առաջացնում է հիվանդություն [6]:

Գոյություն ունեն ագրեսիվության պրոբլեմի հետազոտության բազմաթիվ բիհևյորիստական մոտեցումներ, բայց ագրեսիայի և բռնության միակ ընդհանուր

տեսությունը հանդիսանում է Ջոն Դոլլարդի տեսությունը, որն ուղղված էր ցանկացած ագրեսիայի պատճառի բացահայտմանը [6]:

Ջ.Դոլլարդը ագրեսիան դիտում էր որպես ֆրուստրացիայի հետևանք և մարդը, ով ֆրուստրացիա է զգացել ունի ագրեսիայի հակում: Ագրեսիվ վարք կարող է առաջացնել ինչպես արտաքին գրգռիչները, այնպես էլ պատժվելու վախը: Ջ.Դոլլարդից երկու տարի անց այս տեսության հեղինակներից մեկը՝ Ն.Ե.Միլերը, լրացումներ կատարեց և գրեց, որ ֆրուստրացիան կարող է առաջացնել տարբեր ռեակցիաներ և դրանցից մեկն էլ ագրեսիվությունն է [6]:

Եթե մարդը չկարողանար հայտնաբերել ընդունակություններ, որոնք կհաղթահարեին ֆրուստրացիաները, ապա, հավանաբար, նա չէր կարող կատարելագործվել: Օրինակ, եթե երեխային արգելում են կոնֆետ ուտել, ապա այդպիսի ֆրուստրացիան կարող է և ագրեսիվ ռեակցիա չառաջացնել, քանի որ ծնողները սիրում են նրան, բայց երբ այդ արգելքը հանդիսանում է ծնողական վերաբերմունքի ձև կամ երեխայի ներկայությամբ փոքր քրոջը կոնֆետ են տվել, իսկ իրեն՝ ոչ, ապա այդպիսի իրավիճակը կարող է առաջ բերել գայրույթի իսկական պայթյուն: Այս դեպքում, սակայն, ագրեսիվություն առաջացնողը ոչ թե ֆրուստրացիան է, այլ իրավիճակը, որտեղ առկա է անարդարության տարրը: Բիհևյորիստ Ա.Բասը ևս անդրադարձել է այս խնդրին, սկիզբ դնելով ագրեսիայի բիհևյորիստական տեսությանը [6, էջ 164, 177, 188, 189, 214-221, 228]:

1.2. Մանկական ագրեսիայի առաջացման պատճառները և տեսակները

Անձի սոցիալական խաթարումների ակունքները նախ պետք է փնտրել մանկության շրջանում, որոնք արտահայտվում են **մանկական կամակորոության, մանկական նեգատիվիզմի, մանկական ագրեսիայի** տեսքով: Դրանք իրար հետ փոխկապակցված են և աստիճանաբար մեկը վերաճում է մյուսի:

- **Կամակորոթյունը** արտահայտվում է նրանում, որ երեխան ընդդիմանում, դիմադրում է մեծահասակների պահանջներին, չի լսում նրանց խորհուրդները և իր նպատակին է հասնում լացով, ոտքերի դոփյունով: Հաճախ կամակորոթյունները վեր են ածվում վարքի սովորական ձևերի, որի օգնությամբ երեխան կարողանում է հասնել իր պահանջմունքների բավարարմանը [2, էջ 148]:
- **Մանկական նեգատիվիզմը** (լատիներեն negativo-բացառում, անտեսում) պաշտպանական ռեակցիա (հակադրում) է այն արտաքին՝ մեծահասակների ազդեցությունների նկատմամբ, որոնք հակասում են երեխայի պահանջմունքների բավարարմանը: Նեգատիվիզմը արտահայտվում է երեխայի գռեհկության կոպտության, կամակորոթյան, ինքնամփոփության, հոգեբանական օտարացման (հեռացման) մեջ:
- **Մանկական ագրեսիան** (լատիներեն aggressio-հարձակում) այն ճնշող, բռնի գիտակցական կամ անգիտակցական գործողություններն են, որոնց նպատակը ուրիշին կամ ինքն իրեն վնասելն է: Դա անհաջողության, ցանկալիին չհասնելու նեգատիվ պաշտպանական ռեակցիա է, որը երեխային օգնում է «դիմանալու» իր համար դժվար, կոնֆլիկտային իրավիճակներում և «ամեն գնով» (անկարգ վարքով, խեղկատակությամբ և այլն) հաստատել իրենը: Վարքի այս դրսևորումները բնորոշ են շատ երեխաների (մեկի մոտ՝ մի քիչ ավել, մյուսի մոտ մի քիչ պակաս), որը բնավ էլ չի նշանակում, որ հետագայում անձի վարքը անոմալ զարգացում կունենա: Եթե դրանք ժամանակին չեն հաղթահարվում, ապա դառնում են բնավորության գիծ, անձնային որակ, ապա դառնում են հոգեբանական նպաստավոր պայման անձի սոցիալական խաթարումների համար [2, էջ 148]:

Չարմանալի, բայց օբյեկտիվ փաստ է, որ մարդու բնությունն այնպիսին է, որ դեռ մանուկ հասակից նա այն գիտակցումն ունի, այն սոցիալական սպասումները, ըստ որի՝ սխալ վարքի, արարքի, անգամ աննշան մերժելի գործողության համար ինքը պետք է պատժվի, դա կլինի սուր հայացք, հորդորանք, անկյուն կանգնեցնել, բարձր ձայն՝ էական չէ

նրա համար: «Ճիշտ ու սխալի», «զավ ու վատի» գաղափարը նրա մեջ ներարկվում է դեռ գրկի հասակից սկսած: Երեխան խոսքը չի հասկանում, բայց խոսքի երանգը հասկանում է, քանի որ այն գուգակցվում է մոր (հոր) արտահայտչամիջոցների (դիմախառի և մնջախառի) հետ: Գիտափորձերից մեկի ժամանակ երեխաներին վարքի նորմերը (սեղանի շուրջ պահելու, ինքնասպասարկման կանոններ) սովորեցնելիս, սխալ արարքի համար անկյուն էին կանգնեցնում (կես բռնակով): Երեխաներից մեկը, որը դեռ չէր կարողանում հոգավ իր բնական կարիքը, առանց տրտնջալու անկյուն էր կանգնում և իր կեցվածքով ցույց տալիս, որ ինքը ազդված է իր սխալ արարքից: Հետազոտողների բացակայության ժամանակ նույն ձևով ինքը իրեն «անկյուն էր կանգնեցնում», երբ նորից չէր կարողանում զգուշացնել, որ ինքը բնական պահանջը բավարարելու կարիք ունի: Միթե դուք հարգում ու գնահատում եք այն մանկավարժին, որը բոլորի ներկայությամբ բղավում է ձեզ վրա, պահանջում, անպատվում ու սպառնում, բայց հաջորդ օրը ամեն ինչ մոռանում է: Բայց հարգանք ու պատկառանք ունեք այն մանկավարժի նկատմամբ, որը խստապահանջ և հետևողական է, բայց ոչ չար ու մանրախնդիր: Բայց հստակ գիտեք նաև այն, որ ձեր սխալ արարքը նրա կողմից անպատիժ չի մնա: [2, էջ 150]:

Երեխաներն ագրեսիվ չեն ծնվում: Սովորաբար, երեխայի հակազդումները կրում են պաշտպանական բնույթ: Սակայն, միջավայրի ազդեցությունների ներքո այդ հակազդումները կարող են վերածվել տարբեր վտանգավոր գործողությունների, որոնք կվնասեն շրջապատին: Տարբերակում են ագրեսիայի տարբեր տեսակներ: Կախված իր ուղղվածությունից ագրեսիան լինում է **հետերոզեն** կամ **աուտոզեն**: Առաջինն ուղղված է ուրիշներին, արտաքին աշխարհին, երկրորդը՝ սեփական անձին: Առաջացման պատճառներից կախված՝ կարելի է տարբերակել ռեակտիվ և ինքնաբուխ ագրեսիա: **Ռեակտիվը** սովորաբար առաջանում է ի պատասխան որոշակի արտաքին գրգռիչի, մինչդեռ **ինքնաբուխ** ագրեսիան առաջ է գալիս առանց որևէ պատճառի, ներքին իմպուլսների ճնշման տակ [3,7]:

Կախված արտահայտման ձևերից ագրեսիան կարող է լինել **խոսքային, ֆիզիկական, ուղիղ կամ անուղղակի**: Երեխաներն իրենց գայրույթը, բարկությունը, անհնազանդությունը կարող են արտահայտել խոցող բառերով, վիրավորական արտահայտություններով կամ հարվածելով, կծելով, ֆիզիկական վնաս պատճառելով: Երեխան գայրույթն արտահայտել կարող է բացահայտ, ուղիղ կամ թաքնված, կողմնակի ձևերով՝ անհնազանդություն, իրերի կոտորում կամ գույքի փչացում և այլն [3,7]:

Սովորաբար մասնագետներն առանձնացնում են հետևյալ գործոնները և պատճառները, որոնք կարող են խթանել երեխայի ագրեսիվ վարքը.

- **Անապահովության զգացումը:** Երեխայի բազային, հիմնային պահանջմունքներից է ապահով զգալը, կայուն միջավայրում մեծանալը ու զարգանալը: Ցավոք, ոչ միշտ է, որ շրջապատող միջավայրն իրականում ապահով է կամ ընկալվում է երեխայի կողմից որպես այդպիսին: Սա երեխայի մոտ ներքին կոնֆլիկտների պատճառ է դառնում, նա կորցնում է այն կողմնորոշիչները, որոնցով ապրում էր մինչ այդ: Ուստի, երեխան՝ որպես անապահով միջավայրի կամ հոգեվիճակի հետևանք, կարող է դրսևորել ագրեսիվ վարք՝ ցույց տալով իր անհանդուրժողականությունն ու բարկությունը:

- **Երեխայի հանդեպ թշնամությունը, ծնողների կոպիտ բնավորությունը և վարքը:** Երբ երեխան սիրո և հոգատարության մթնոլորտի փոխարեն մեծանում է թշնամանքի և ագրեսիայի մեջ, բնականաբար, նրա առաջնային պատասխանը ևս կարող է դառնալ ագրեսիան: Ընդ որում՝ այդ ագրեսիան կարող է լինել ուղղված թե՛ միջավայրին, թե՛ սեփական անձին: Երեխան տեսնում է որոշակի վերաբերմունք և նմանապես արձագանքում է տարբեր իրավիճակներում:

- **Ընտանեկան հուզական կապերի բացակայությունը:** Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ երեխան իր առաջին քայլերն է անում դեպի մեծ աշխարհ, ճանաչում է առկա հարաբերությունները, կանոնները, նորմերը, պահանջները: Ընտանիքում երեխան տեսնում է, թե ինչպես են հարաբերվում, վերաբերվում միմյանց, սովորում է սիրել հարգել, հոգ տանել և այլն: Եթե ընտանիքում խախտված կամ խզված են հուզական կապերը, երեխան չի ունենում համապատասխան փորձ և չի կարողանում համապատասխան և ընդունելի վարք ձևավորել:

- **Երեխայի հանդեպ անհարգալից վերաբերմունքը:** Երեխան առանձին էակ է, իր ուրույն ցանկություններով, պահանջներով, մտքերով, պատկերացումներով: Նա հաճախ ուզում է իր դերն ու նշանակությունը զգալ ընտանեկան համակարգում: Նա ուզում է իր արժեքն ու կարևորությունն ունենալ իր սեփական ընտանիքում: Երեխան ցանկանում է լսված լինել, հասկացված և հարգված:

- **Չափազանց վերահսկողությունը կամ դրա բացակայությունը:** Ծնողական գերխնամքը կամ գերվերահսկողությունը, ինչպես և դրա հակառակ բևեռը՝ վերահսկողության և ուշադրության խիստ պակասը կամ բացակայությունը, երեխայի անձի հանդեպ անհարգալից վերաբերմունքի դրսևորումներից են: Ծնողն ուշադրություն չի դարձնում երեխայի իրական կարիքներին, հոգ չի տանում նրա իրական պահանջմունքների համար, ինչը բերում է վերջինիս կոպտությանը և չարացմանը:

• **Հուզական և վարքային էներգիայի դրսևորման արգելքը:** Երեխան մշտապես շարժման, էներգիայի լիցքաթափման, ակտիվության դրսևորման կարիք ունի: Նման հնարավորության պակասը կամ ակտիվության ճնշումը էներգիայի մեծ պաշար են կուտակում, որը պետք է պարտադիր ծախսվի: Եթե այն դուրս չի գալիս կառուցողական ճանապարհով, սովորաբար վերածվում է ագրեսիայի:

• **Արտաքին ագրեսիվ մոդելի առկայությունը:** Երեխաներն անընդհատ սովորում են ու նմանակում շրջապատում առկա վարքային մոդելներին: Լինեն դա ծնողները, շրջապատող մարդիկ, թե կինո և մուլտիերոսները, երեխաները սովորում են համապատասխան վարքաձևեր և վարվելաոճեր: Ուստի, երեխայի կյանքում առկա ագրեսիվ մոդելները սովորեցնում են նրան ագրեսիվ լինել:

• **Սեփական բացասական փորձը:** Բնականաբար, յուրաքանչյուր ոլորտում նրանք կարող են ունենալ որոշակի խնդիրներ, չհաղթահարված ապրումներ, չհասկացվածություն, որը հանգեցնի ներքին լարվածության և ագրեսիայի:

• **Անլիարժեքության զգացումը, ցածր ինքնագնահատականը, դժգոհությունը սեփական անձից:** Երեխայի անբավարարվածությունը սեփական կարողություններով, ընդունակություններով, ուրիշների հետ համեմատվելը՝ ի վնաս սեփական անձին, սեփական անլիարժեքության մշտական զգացողությունը քրոնիկ ճնշվածության և չարացման պատճառներից են:

• **Խառնվածքի տիպը և անձնային որակները:** Երեխաները միմյանցից տարբերվում են նյարդային համակարգի և անձնային կառուցվածքի առանձնահատկություններով: Որոշ դեպքերում կարելի է նկատել ագրեսիվ վարքին նպաստող վերոնշյալ առանձնահատկություններ, օրինակ՝ իմպուլսիվություն, արգելակման նյարդային գործընթացների անլիարժեքություն, ապահարմարողական բնավորություն և այլն:

• **Իրադրային պատճառները:** Հաճախ անբարենպաստ իրադրային պատճառներն առիթ են երեխաների լարվածության մեծացման, բացասական հույզերի կուտակման, ագրեսիվ վարքի առաջացման համար:

• **Բացասական արտաքին պայմանները:** Սրանք այն գործոններն են, որոնք կարող են խախտել երեխայի առօրյա կենսագործունեությունը, կտրուկ ազդել երեխայի կյանքի սովորական ռիթմի վրա: Դրանց թվին են պատկանում հոգետրավմաները և սթրեսները [3, էջ 44-46, 7]:

ԳԼՈՒԽ 2. ՄԻՋՈՑՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԱԳՐԵՄԻԱՆ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2.1. Գրական ծնողավարման օրինակներ

«Բարդ» վարքով երեխաների ձգտումներն օրինաչափ են. դրանք արտահայտում են ծնողների կողմից ուշադրություն և ջերմություն ստանալու, իրենց անձն ընդունված և հարգված տեսնելու, արդարության և հաջողության հասնելու պահանջումները:

Ուստի ակնհայտ է, որ երեխաները ոչ միայն նյութական կարիքներ ունեն (կոնֆետ, գեղեցիկ հագուստ, հեծանիվ և այլն), այլև.

- Ապահովության, անվտանգության, կայունության,
- Հուզական և ֆիզիկական կապվածության,
- Առանց նախապայմանների սիրված և ընդունված լինելու,
- Լավ ինքնագագոթության, դրական հույզերի (որպեսզի չունենան ծանր, տևական բացասական հուզական ապրումներ, վախեր),
- Լաված, հասկացված լինելու,
- Ընդունված լինելու (այնպիսին, ինչպիսին իրենք կան),
- Սեփական կարողությունների սահմաններում ինքնուրույն լինելու,
- Աշխարհը ճանաչելու, հետազոտելու, բացահայտելու,
- Չարգացման, սեփական ներքին կարողությունը ռեալիզացնելու և այլն:
- Պիտանի լինելու (երբ տանն ունեն իրենց դերն ու պարտականությունները),
- Հաջողակ լինելու (ծնողների, ընտանիքի անդամների, ընկերների հետ շփումներում, ուսման մեջ և այլն) [1, էջ 83]:

Այն պահից սկսած, երբ ծնողը կարողանում է հասկանալ երեխայի անցանկալի վարքի հիմքում ընկած պատճառը, կարող ենք խոսել արդյունավետ արձագանքման մասին: Առաջին կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ ծնողը պետք է արձագանքի ոչ սովորական կերպով, այսինքն՝ ոչ այնպես, ինչպես սովորաբար արձագանքում էր, ինչպես սպասում է երեխան: Բանն այն է, որ նման դեպքերում գործում է փակ շղթա. որքան դժգոհ է ծնողը, այնքան ավելի է երեխան համոզվում, որ իր ջանքերը հասան նպատակին, և շարունակում է ավելի ու ավելի վատացնել վարքը: Երբ ծնողը դադարում է նախկինի պես արձագանքել երեխայի վարքին, փակ շղթան կտրվում է [1, էջ 83]:

Անշուշտ, հույզերը կառավարելը հեշտ չէ, սակայն կարևոր է.

- Գրգռվածություն
- Վիրավորանք

- Հուսահատություն
- Բարկություն
- Ուշադրության համար պայքար
- Վրեժ լուծելու ցանկություն
- Սեփական հաջողության հանդեպ հավատի կորուստ
- Ինքնահաստատման,
- իշխանության ձգտում

Դադարեցնել ոչ թե հույզի ապրումը (հույզը գոյություն ունենալու իրավունք ունի, այն չենք կարող չեղարկել), այլ հույզին հաջորդող արձագանքները՝ նկատողությունները, պատիժները և այլն, հասկանալ սեփական հույզն ու հետևաբար նաև երեխայի վարքի պատճառը՝ վարքը փոխողի դիրքից անցնել երեխային աջակցողի դիրքի: [1, էջ 81]:

Կարգապահությունը հաստատվում է ոչ թե ծնող-երեխա առողջ, դրական, արդյունավետ հարաբերություններ կառուցելուց առաջ, այլ դրանից հետո, դրա հիմքի վրա: Առանց երեխայի և սեփական զգացմունքները, ապրումները, հետաքրքրություններն ու պահանջմունքները հաշվի առնելու՝ ծնողները չեն կարող կարգապահություն հաստատել: Երեխաներին ոչ միայն պետք են կանոններ, այլև նրանք ցանկանում ու սպասում են դրանց: Կանոնները երեխայի կյանքը հասկանալի, կանխատեսելի են դարձնում ու ապահովության զգացում առաջացնում: Երբեմն երեխաներն ավելի հակված են կարգուկանոնի, քան մենք կարող ենք պատկերացնել: Այսպես, օրինակ, երեխաները կարող են անհանգիստ դառնալ, երբ ինչ-որ բան փոխվում է իրենց առօրյա ռեժիմում (քնի, սննդի ռեժիմ և այլն), միջավայրում (տան դասավորության փոփոխությունների հետ կապված երեխաները կարող են բազմաթիվ հարցեր տալ): Նախադպրոցականներն իրենց հերթին սիրում են, որ ամեն ինչ լինի ճիշտ նույն կերպ, հանկարծակի փոփոխությունները կարող են բացասաբար ընդունվել նրանց կողմից, քանի որ խաթարում են երեխաների ապահովության զգացումը [1, էջ 57]:

Այդ դեպքում, եթե երեխայի համար այդքան կարևոր են սահմանները, կարգուկանոնը, ինչո՞ւ են նրանք այդքան պայքարում դրանց դեմ, հրաժարվում հետևել ծնողների սահմանած կարգուկանոնին: Պատճառները չափազանց շատ կարող են լինել, սակայն հիմնականում երեխաների ըմբոստությունն ուղղված է ոչ թե կարգուկանոնի, այլ դրա ներդրման ու իրականացման ձևերի դեմ [1, էջ 58]:

2.2. Կանոններ կարգապահության արդյունավետ ներմուծման համար

- ❖ Երեխայի կյանքում պետք է լինեն կանոններ, սահմանափակումներ, պահանջներ, արգելքներ:
Երեխան կարիք ունի, որ մեծահասակներն իրեն տեղեկություն տան այն մասին, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, քանի որ այդ պարագայում նա ունենում է ուղեհիշներ, կողմնորոշիչներ, արժեքներ, ապահովության զգացում: Սա հատկապես օգտակար է հիշել այն ծնողներին, ովքեր, ձգտելով չնեղացնել կամ չտխրեցնել երեխային, կատարում են նրա բոլոր ասածները: Երբ մենք երեխայի վարքը որևէ ձևով չենք սահմանափակում, մենք չենք սովորեցնում նրան հաշվի առնել այլ մարդկանց սահմանները.
- ❖ Ծնողական պահանջները չպետք է հակասեն երեխայի կարևորագույն պահանջմունքներին:
Օրինակ՝ երեխան ունի շարժվելու և ակտիվություն ցուցաբերելու, ճանաչողական պահանջմունք: Այս դեպքում, եթե մենք նախադարձական տարիքի երեխայից պահանջենք երկար նստած մնալ աթոռին հյուրերի տանը կամ ձեռք չտալ իր համար նոր ու հետաքրքիր առարկաներին, ամենայն հավանականությամբ կձախողենք:
- ❖ Շատ մեծ նշանակություն ունի ոչ միայն այն, թե ինչ ենք ասում երեխային, այլև թե ինչ տոնայնությամբ ենք ու ինչպես ենք ասում՝ ձայնի հնչերանգը մարմնի դիրքը, ձեռքերի շարժումը, հայացքը, որով հաղորդվում են պահանջը կամ արգելքը, պետք է լինեն բարյացակամ, բացատրող, բարեհամբույր, ոչ թե թշնամական կամ հրամայական:
- ❖ Սահմանափակումը դնելիս արդյունավետ կլինի առաջնորդվել հետևյալ սխեմայով.
Զգացմունքին անդրադարձ- Սահմանափակում դնելուց առաջ նույնպես այս կետերն ապահովելը կարևոր է: Օրինակ՝ «Հասկանում եմ, որ շատ ես ուզում նկարել»: Զգացմունքին անդրադառնալուց հետո միայն բացատրել՝ ինչու երեխան պետք է այդ պահին դադարեցնի նկարելը կամ խաղալը:
Անհրաժեշտ է հստակ և կոնկրետ ներկայացնել կանոնը՝ բացատրելով նաև սահմանափակման պատճառը- Պահանջը կամ արգելքը ներկայացնելիս շատ կարևոր է երեխային կարճ տեղեկություն տալ տվյալ սահմանափակման մասին, բացատրելով պահանջի էությունն ու հիմնավորել պատճառը: Օրինակ՝ «պատերի վրա չեն նկարում, քանի որ հետքերը չեն մաքրվում»:
Այլընտրանքի առաջարկ- Սահմանափակման բուն էությունն ու պատճառը ներկայացնելուց հետո կարևոր է երեխային առաջարկել վարքի այլընտրանքային,

առավել ընդունելի ու ցանկալի, կառուցողական ճանապարհ: Օրինակ՝ «Դու կարող ես նկարել այլոսմիդ մեջ կամ պատին փակցված մեծ թղթի վրա» [1, էջ 58-61]:

Անիմաստ է սպասել, որ կարգապահական կանոնների ներմուծման առաջին իսկ օրն արդյունք կունենաք. ճանապարհը երկար ու բարդ է, պահանջում է մեծ համբերություն ու հետևողականություն: Կարևոր է հիմնական ջանքերն ուղղել երեխայի բացասական հույզերը կառուցողաբար, ընդունելի կերպով արտահայտելու ուղղությամբ: Այսպես, կարևոր է ոչ թե ուղղակի արգելել երեխային բարկանալ, գոռալ, այլ հասկանալ նրան ու օգնել այդ հույզն արտահայտել ընդունելի տարբերակով (օրինակ՝ խոսել դրա մասին, նկարել այդ հույզը, ֆիզիկական ակտիվությամբ զբաղվել և այլն) [1, էջ 62]:

Իսկ ի՞նչ կարող է անել մեծահասակը, ծնողը կամ ուսուցիչը, որպեսզի նվազեցնի երեխայի ագրեսիվ դրսևորումները: Երեխան պետք է հասկանա և ճանաչի իր անարդյունավետ վարքի հետևանքները, հասկանա, թե իր վարքն ինչպես կարող է ազդել շրջապատի վրա: Երեխայի համար շատ օգտակար է, երբ տանը կամ շրջապատում կան հստակ սահմանված կանոններ: Եթե երեխան խախտում է դրանք՝ չափազանց բարկանում է, գոռում է և այլ ագրեսիվ դրսևորումներ է ունենում, լավագույն միջոցն է հիշեցնել կանոնները, ինչպես նաև շեշտադրել, թե ինչ կարող է լինել դրանց խախտելու դեպքում: Որպեսզի երեխայի ագրեսիվ վարքը նվազի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կօգնեն նրան գիտակցել իր արարքների անցանկալի լինելը: Կարևոր է քննարկել նրա վարքը, դրա պատճառները, հետևանքները, առաջարկել այլընտրանքներ: Սա անհրաժեշտ է անել, երբ իրավիճակի լարվածությունն արդեն նվազել է ու երեխան ավելի հանգիստ է: Երբ իրավիճակը շատ լարված է և երեխան կարծես՝ անկառավարելի է, մեծահասակները պետք է հիշեն, որ իրավիճակը հանգստացնելու արդյունավետ ճանապարհներից մեկը ինքնակառավարումն է: Անհրաժեշտ է կիրառել հետևյալ մոտեցումները՝ *ձայնը չբարձրացնել, չգոռալ, չցուցաբերել իշխանություն* («Ես որ ասում եմ, դու պետք է ենթարկվես»), *չդրսևորել ագրեսիվ մարմնասխաղ (ագրեսիվ կամ արհամարհական ժեստեր ու շարժումներ), չանցնել վերբալ կամ ֆիզիկական ագրեսիայի, չհամեմատել ուրիշների հետ կամ չվիրավորել ընկերներին, չներգրավել այլ մարդկանց, չանել ընդհանրացումներ* («Այ, դու միշտ քեզ վատ ես պահում», «Դու անտանելի երեխա ես») [3, էջ 46-47, 9]:

Ագրեսիայի կառավարման լավագույն միջոցը սեփական դրական օրինակն է: Եթե մեծահասակն ունի ինքնակառավարման և ինքնակարգավորման հմտություններ, կարողանում է ժամանակին ճիշտ արձագանքել երեխայի կարիքներին, ագրեսիվ դրսևորումները միանշանակ նվազում են [3]:

2.3. Երեխայի ազդեցիկ վարքին ուղղված խաղեր և վարժություններ

✚ **Տղան Աֆրիկայում** (սյուժետային խաղ)

Տարիքը- 3+

Նպատակ- ազդեցիկ վարքի շտկում

Մինչ խաղի սկիզբը, նախապես խաղալիք վագր ենք վերցնում, եթե չունենք, որևէ այլ խաղալիք: Երբ արդեն խաղալիքները պատրաստ են, երեխային կարճ պատմություն ենք ներկայացնում՝

Աֆրիկայում զբոսնելիս՝ տղան հանդիպեց վագրին, ով հեծանիվ էր քշում. «Ես էլ եմ հեծանիվ ուզում քշել», - մտածեց նա: Կարող ես ասել, ի՞նչ արեց նա հետո:

Եթե երեխան կասի, որ տղան մայրիկին և հայրիկին է խնդրում գնել այդ հեծանիվից, մասնագետը պատասխանում է, որ նա հենց այդ պահին է ուզում, ի՞նչ կանի այդ դեպքում: Եթե երեխան ասում է, կամ ցույց է տալիս, որ պարզապես կվերցնի վագրից հեծանիվը, մենք հիշեցնում ենք, որ վագրը տղայից ուժեղ է և սուր ատամներ ունի: Եթե կնկատենք, որ երեխան չի կարողանում ճիշտ տարբերակ գտնել, սկսում ենք փորձարկել տարբեր իրավիճակներ, օրինակ, երեխային սովորեցնում ենք, թե ինչպես կարելի է խնդրել վագրից, որ հեծանիվը տա, կամ ինչպես կարելի է պայմանավորվել:

Նմանատիպ ևս մի քանի իրավիճակներ, որոնք կարելի է խաղալիքների միջոցով խաղարկել և ելքեր փորձել գտնել՝

- «Աղջիկը խաղալիք է վերցրել և գնացել է բակ, մյուս երեխաները ևս ցանկանում են խաղալ այդ խաղալիքով ու փորձում են վերցնել աղջկա ձեռքից այդ խաղալիքը, ի՞նչ կանի նա:
- Երեխաները ավագով խաղում են, և հանկարծ երեխաներից մեկը մյուսի վրա ավագ է լցնում, ի՞նչ կանի մյուս երեխան:
- Քո ընկերը բարկանում և հարվածում է քեզ, ի՞նչ կանես նման իրավիճակում: Իրավիճակների քննարկման համար երեխային ցույց ենք տալիս «**Ինչ կանես նման իրավիճակում**» քարտերը [5, էջ 11-13]:

Չար երեխան

Տարիքը- 5+

Նպատակ- ագրեսիվ վարքի շտկում

Երեխաները շրջանաձև նստում են, այնուհետև հերթով յուրաքանչյուրը մոտենում է միջնամասին և ցույց տալիս չենթարկվող երեխայի, նա ով ամենից լավ կխաղա այդ դերը, մնում է կենտրոնում, այնուհետև ընտրում ենք որևէ մեկին, ով դառնում է ծնող և երեխաները «խաղարկում» են ծնող-երեխա հարաբերություններ, որտեղ ծնողը փորձում է «լեզու գտնել» չենթարկվող երեխայի հետ [5, էջ 14]:

Աշտարակ

Տարիքը- 3+

Նպատակ- ագրեսիվ վարքի շտկում

Երեխաները շրջանաձև նստում են, և պետք է բոլորով միասին բարձր աշտարակ կառուցեն տարբեր խորանարդներով: Յուրաքանչյուրը պետք մեկ հատ դնի: Երբ արդեն բավականաչափ բարձրանում է, միասին քննարկում են, թե ինչպես կարելի է դնել հաջորդ խորանարդը, որպեսզի չքանդվի աշտարակը [5, էջ 18]:

Խնդրի խաղալիքը

Տարիքը- 3+

Նպատակ- ագրեսիվ վարքի շտկում

Երեխաները բաժանվում են զույգերի, մեկին տալիս ենք որևէ իր՝ խաղալիք, կամ մատիտ, մյուսին՝ ոչ: Նա, ով չունի շատ է ուզում այդ իրն ունենալ, սակայն նա, ով ունի, չի ուզում տալ: Առաջինի խնդիրն է փորձել ամեն կերպ համոզել, որպեսզի դիմացինը տա իրը, իսկ երկրորդը կարող է տալ միայն այն ժամանակ, երբ կզգա, որ ինքն էլ է ցանկանում տալ [5, էջ 19]:

Նարինջ կամ կիտրոն

Ընթացքը- վարժությունը կարող է կիրառվել ինչպես երևակայական մակարդակում, այնպես էլ՝ իրական:

Հրահանգ- Վերցրու՝ նարինջը, գրրի այն առաջ-հետ, սկզբում աջ ձեռքով, ապա՝ ձախ: Այնուհետև հոգեբանը պետք է այն բաժանի երկու մասի և երեխան, այն սեղմելով, պետք է հյուսթ ստանա դրանից [4, էջ 108]:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՒԱԿԱՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

3.1. Երեխայի ագրեսիվ վարքի վերլուծությանն ու ախտորոշմանն ուղղված մեթոդներ և մեթոդիկաներ

- ❖ Երեխայի վարքի դիտում սոցիալական միջավայրում, տարբեր խաղային գործընթացների ժամանակ՝ երեխայի և հասակակիցների, երախա և ծնող հարաբերություններում:
- ❖ Չրույց՝ ծնողի հետ, երեխայի վարքի դրսևորումների մասին, տանը կամ այլ սոցիալական միջավայրում, դաստիարակության կիրառվող միջոցները, ընտանիքի սոցիալ-հոգեբանական վիճակը, զրույց երեխայի հետ՝ խաղի միջոցով:

❖ Գիագնոստիկ մեթոդիկաներ

- ✓ *Ռեննե Տիլի մեթոդիկա*

Ուղղված է ուսումնասիրելու երեխայի սոցիալական հարմարման աստիճանը, նրա միջանձնային հարաբերությունների ոլորտը և դրանց առանձնահատկությունները, նրա ներընտանեկան հարաբերությունների ընկալումը, ինչպես նաև նրա վարքի բնութագրական առանձնահատկությունները:

- ✓ *«Ընտանիքի նկար» պրոյեկտիվ թեստ*

Թեստի օգտագործման գաղափարը ներընտանեկան փոխհարաբերությունների բացահայտումն է: Հարցման ժամանակ, հոգեբանը պետք է բացահայտի երեխայի զգացմունքներն ընտանիքի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Պետք է խուսափել ուղղակի հարցերից և չստիպել՝ երեխային պատասխանելու, քանի որ ստիպողականությունը նրա մոտ կարող է առաջացնել լարվածություն, պաշտպանական ռեակցիաներ:

«Ընտանիքի նկար» թեստով կարելի է որոշել.

- Ընտանիքի մշակութային զարգացման մակարդակը
- Երեխայի վիճակը նկարելու ընթացքում, թե ինչպես է արտահայտվում, առաջադրանքի մասին, ինչպիսի դիտողություններ է կատարում, նկարելիս ինչպիսի հույզեր է դրսևորում, ինչպես է իրեն պատկերում թղթի վրա և այլն:

- ✓ *Մանկական ապերգեպտիվ տեստ: Ե.Բենի-Ե. Անտոնի մանկական տեստ «Հուզական հարաբերությունները ընտանիքում»*

«Մանկական ապերգեպտիվ տեստը» (CAT) ընդունակ է բացահայտել միջանձնային հարաբերությունների դինամիկան, տազնապները ծնող-երեխա հարաբերություններում և պաշտպանիչ եղանակները դրանցից: Թեստը թույլ է տալիս որակապես և քանակապես գնահատել զգացմունքները, որոնք երեխան զգում է իր ընտանիքի անդամների հանդեպ, և, այն, թե ինչպես է նա ընկալում նրանց վերաբերմունքը իր նկատմամբ: Բացի այդ, մեթոդիկայի միջոցով բացահայտվում են երեխայի կողմից օգտագործվող հոգեբանական պաշտպանության տեսակները:

Մեթոդիկան ունի երկու ձև, ներկայացված մեթոդական ուղեցույցում.

1. Նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների համար

2. Դեռահասների համար:

- ✓ «Անավարտ նախադասությունների մեթոդիկան» ըստ Սակսի և Լևիի
- ✓ Դաստիարակության ոճեր (հարցարան)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ Ֆրոյդի, եթե ագրեսիան կուտակվում է անձի հոգեկանում, լարվածություն է առաջանում, եւ մարդը կարիք ունի ագրեսիայից ազատվելու, լիցքաթափվելու:

- Պատժելով երեխային՝ մենք գրկում ենք նրան իր սխալ արարքը հասկանալու և այն փոխելու հնարավորությունից:
- Անցանկալի վարքին արդյունավետ արձագանքելու համար անհրաժեշտ է հասկանալ դրա հիմքում ընկած պատճառը՝ ուշադրության պակաս, ինքնահաստատման, իշխանության ձգտում, վրեժ լուծելու ցանկություն անվստահություն սեփական ուժերի հանդեպ:
- Անցանկալի վարքը կանխելու համար կարևոր է անցնել երեխային աջակցողի դիրքի:

Ագրեսիվ երեխաների հետ աշխատանքները կարող է իրականացվել հետևյալ միջոցներով.

- Խաղաթերապիա
- Արտ-թերապիա
- Ավագաթերապիա
- Հեքիաթաթերապիա, որոնք օգնում են ձերբազատել սթրեսներից, բացասական հույզերից եւ կառավարել սեփական հույզերը: Սրանք նաեւ անձի ներդաշնակ զարգացումն են ապահովում ինքնաբացահայտման եւ ինքնաարտահայտման միջոցով:
- Կարելի է նաև սուբլիմացնել ագրեսիան սպորտում:
- Ապահովել ֆիզիկական ակտիվության ավելի կառուցողական եղանակներ՝ օր, սպորտի միջոցով, քանի որ ֆիզիկական ակտիվությունը իջեցնում է ագրեսիայի մակարդակը
- Ագրեսիայից հնարավոր է ազատվել երևակայության գործընթացների միջոցով, երբ այն վեր է ածվում սոցիալապես ավելի ընդունելի ձևերի՝ նկարի, ստեղծագործության, խաբրոցի և այլն:

Երեխայի ագրեսիվ վարքն, իհարկե անհանգստություն է պատճառում ծնողներին, սակայն խնդիրն հանգամանալից հասկանալուց հետո, կարող ենք իրականացնել շտկողական աշխատանքներ, որից առաջ շատ կարևոր է հաշվի առնել ծնող-երեխա-ուսուցիչ-հոգեբան ակտիվ փոխհարաբերությունները, առանց որոնց երեխայի զարգացումն ու սոցիալիզացումը կլինի ոչ արդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Ինչպե՞ս ենք մենք նպաստում ագրեսիայի ձևավորմանը. երեխայի մոտ ագրեսիայի ձևավորմանը նպաստող առաջին պատճառներից մեկը, բնականաբար, երեխայի հանդեպ կիրառվող ագրեսիվ դաստիարակության մեթոդներն են: Ագրեսիվ վարքի ձևավորման մեկ այլ ճանապարհ կարող է լինել երեխայի կողմից ուղղակիորեն ագրեսիվ վարքագծի յուրացումը իր շրջակա միջավայրից՝ ծնողներից, ընտանիքի անդամներից, ֆիլմերից, էլեկտրոնային խաղերից և այլն: Ագրեսիան կարող է առաջանալ նաև էմոցիոնալ դեպրիվացիայի հետևանքով, երբ երեխայի հանդեպ պակասում է սերը, հոգատարությունը և ուշադրությունը: Եթե մենք ուշադիր լինենք, կնկատենք, որ շատ ագրեսիվ երեխաները շատ զգայուն են իրենց հանդեպ ցուցաբերված հոգատարության և սիրո նշանների հանդեպ.

- Ծնողների մշտական զբաղվածությունը: Այս կերպ երեխան փորձում է ուշադրություն գրավել իր վրա, երեխան ուշադրություն և սեր չի ստանում իր ծնողների կողմից, ինչը կարող է ագրեսիվ վարքի պատճառ հանդիսանալ:
- Երեխան միակն է, և տանը ոչ ոքի հետ չի խաղում ըստ այդմ էներգիան չի կարողանում ամբողջովին սպառել, ինչն էլ անդրադառնում է մյուս երեխաների վրա:
- Ընտանեկան անբարենպաստ սոցիալ-հոգեբանական վիճակը:
- Երեխայի մոտ ագրեսիվությունը կարող է պայմանավորված լինել նաև անձնային առանձնահատկություններով, պահանջմունքների չբավարարվածությամբ, ուշադրության պակասով և մի շարք այլ գործոններով:

Երեխաների մոտ ագրեսիվ վարքը բացատրվում է նրանով, որ այն ունի պաշտպանական նշանակություն և հոգեբանական պաշտպանական մեխանիզմներն արդարացնում են նրա ագրեսիվ վարքը: Տարիքային ճգնաժամերը, որոնք ուղեկցվում են ագրեսիայի աճով, կապված են նոր պահանջմունքների հայտնվելու հետ, որոնք չեն բավարարվում առկա հարաբերություններում ու կարողություններում: Եվ պետք է հիշենք, որ ագրեսիան ոչ միայն դեստրուկտիվ վարք է, այլև մեծ ուժ, որը կարող է դառնալ կառուցողական գործողությունների կարևոր աղբյուր: Երեխային շրջապատող մեծահասակների հիմնական խնդիրը երեխային օգնելն է այդ ուժի հետ գործ ունենալ և համագործակցել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբեկյան Լ., Վարդանյան Ա. - Գիտակցված ծնողավարում արտակարգ իրավիճակներում. ձեռնարկ ծնողների համար, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան, «Ծնողի դպրոց» ՀԿ, 2020թ.
2. Արզումանյան Ս. Հոգեբանություն:- Եր., Չանգակ-97, 2003, 176 էջ:
3. Խանամիրյան Ի. Ռ., Գևորգյան Դ. Է. Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար/ Ի. Ռ. Խանամիրյան, Դ. Է. Գևորգյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 70 էջ:
4. Խուղոյան Ա., Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի ուղեցույց: Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար.- Եր.: ՎԵԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2018.- 188 էջ:
5. Խուղոյան Ա., Խաղաթերապիա: Հոգեբանական խաղեր երեխաների և դեռահասաների համար: Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար.- Եր.: ՎԵԼԱՍ Պրինտ ՍՊԸ., 2021.- 188 էջ:
6. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ: Գիրք երկրորդ/ Ա Նալչաջյան.- Երկրորդ, բարեփոխված հրատարակություն. -Եր.: Բուկինիստ, 2016, 544 էջ:
7. Бэрон Р., Ричардсон Д. Агрессия, СПб, Питер, 1997, 352 стр.
8. Выготский Л. С.,Собрание сочинений: В 6-ти т. Т.3. Проблемы развития психики/Под ред. А. М. Матюшкина.—М.: Педагогика, 1983.—368 с., ил.— (Акад. пед. Наук СССР).
9. Лютова Е. К., Монина Г. Б., Шпаргалка для родителей: психокоррекционная работа с гиперактивными, агрессивными, тревожными и аутичными детьми, М., Генезис, 2000, 192 стр.